



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 66 - Ա

14 մարտի 2014 թ.

**ՄԱՐԶՈՒՄ ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6-րդ և 1.15-րդ կետերի դրույթներով՝
կարգադրում եմ՝

1. Կրծողների միջոցով քաղաքացիներին փոխանցվող վտանգավոր և վարակիչ հիվանդություններից խուսափելու և կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով՝

1) մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ. Հովհաննիսյանին՝ հետևել , որ առևտրական , հասարակական սննդի , արդյունաբերական , կուլտուր-կենցաղային , կրթական և կոոպերատիվ բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները դեռատիզացիայի , դեզինֆեկցիայի և դեզինսեկցիայի կատարման համար երկամսյա ժամկետում պայմանագրեր կնքեն „Գեղարքունիքի կանխարգելիչ ախտահանման „ ՊՓԲԸ- ի հետ:

2) „Գեղարքունիքի կանխարգելիչ ախտահանում „ ՊՓԲԸ- ի տնօրեն Ռ. Ժամհարյանին՝

ա) վերանայել մարզի կազմակերպությունների հետ պրոֆիլակտիկ դեզինֆեկցիայի , դեռատիզացիայի և դեզինսեկցիայի կատարման պայմանագրերը , փաստացի կատարած աշխատանքների համար գանձումներ կատարել պայմանագրային գներին համապատասխան .

բ) անհատ տնտեսություններում աշխատանքները կատարել պայմանագրային հիմունքներով՝ որպես վճարովի ծառայություն .

գ) դեռատիզացիոն , դեզինֆեկցիոն և դեզինսեկցիոն աշխատանքները կատարել պարբերաբար , որակով և ժամանակին .

դ) պայմանագիր չկնքելու դեպքում համապատասխան կազմակերպություններին ներկայացնել պատասխանատվության :

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Մ.Մանուկյանին :

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից :

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ